ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2019թվականի N 97

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի որոշում եմ՝

1. 2019թվականի ապրիլի 1-ին ժամը 11-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով .

1) «Սոս մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի «Ցերեկային խնամքի կենտրոն Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կոտայք գյուղի և «ՍՈՍ» մանկական գյուղի երեխաների համար » ծրագրի ֆինանսավորման մասին

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019թ. Մարտի 28
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՄԱՐՏԻ 2019թվականի N 98

## <<ԲԻՈՏԵԿ>> ՍՊԸ-Ի ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, հիմք ընդունելով <<ԲԻՈՏԵԿ>> ՍՊԸ-ի տնօրեն Էդվարդ Խաչիկի Բարեղամյանի դիմումը որոշում եմ՝

1.Համաձայնեցնել կառուցապատող՝ <<ԲԻՈՏԵԿ>> ՍՊԸ-ի տնօրեն Էդվարդ Խաչիկի Բարեղամյանի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Ակունք գյուղի վարչական տարածքում գտնվող՝ ծածկագիր՝ 07-009-0117-0101, 0,997 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա մետաղական հավաքովի ջերմոցի կառուցման համար:

2. Կառուցման համար նախատեսված 1046,5քմ գյուղնշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրելով արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա:

3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունը սկսելու վերաբերյալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. Մարտի 29
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 99

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 70 -րդ հոդվածի ,«Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի ,հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 12 որոշումը և 2019 թվականի ապրիլի 2-ին Ակունքի համայնքապետարանում կայացած աճուրդի արդյունքները՝ որոշում եմ ՝

1. Գյուղատնտեսական նշանակության 0.277 հա արոտավայրը ,ծածկագիր՝07-009-0117-0106,օտարել Զոհրաբ Նորայրի Սարգսյանին 150 000 դրամով
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված ժամկետով գումարի մնացած մասը մուծելուց հետո:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 __ թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 100

## ՌՈԶԱ ՇԻՐԻՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2019 թվականի ապրիլի 2-ի կարիքի գնահատման թիվ 11 արձանագրությունը և Ակունք համայնքի Կապուտան գյուղի բնակիչ Ռոզա Շիրինի Խաչատրյանի դիմումը, որոշում եմ՝

1. Ակունք համայնքի բնակիչ Ռոզա Շիրինի Խաչատրյանին տրամադրել ֆինանսական օգնություն 30000 /երեսուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019թ. ապրիլի 4
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

05 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 101

## ՌԱՆՏԻԿ ՌՈՒԲԵՆԻ ԲԱԴԱՍՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2019 թվականի ապրիլի 3-ի կարիքի գնահատման թիվ 12 արձանագրությունը և Ակունք համայնքի Կոտայք գյուղի բնակիչ Ռանտիկ Ռուբենի Բադասյանի դիմումը, որոշում եմ՝

1. Ակունք համայնքի բնակիչ Ռանտիկ Ռուբենի Բադասյանին տրամադրել ֆինանսական օգնություն 30000 /երեսուն հազար/ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19թ. ________
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

08 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 102

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունք համայնքի խնամակալության և հոգեբարձության մարմին է դիմել Ակունք համայնքի Ակունք գյուղի բնակիչ Ռուզաննա Սարգսյանը՝Ակունք համայնք Ակունք գյուղի 23 փողոց 10 հասցեի՝միակողմանի ծնողազուրկ երեխայի՝ Լուիզա Սարգսյանի մասը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին խնդրանքով,սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 10122018-07-0066:

Համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրություններից պարզվել է,որ Ռուզաննա Սարգսյանը իր երեխայի հետ հաշվառված է և ապրում է Ակունք համայնք գյուղ Ակունք Եկեղեցու փողոց 1 փակուղի տուն 5 հասցեում իրենց սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը:

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 29,30 և 39 հոդվածներով՝ որոշում եմ՝
1.Տալ համաձայնություն Ակունք համայնք գյուղ Ակունք Եկեղոցու փողոց1 փակուղի տուն 5 հասցեի բնակիչ՝Ռուզաննա Սարգսյանը վաճառելու Ակունք համայնք գյուղ Ակունք 23 փողոց 10 հասցեի իր և իր միակողմանի ծնողազուրկ երեխայի՝ Լուիզա Հովհաննեսի Սարգսյանի բաժնեմասը վաճառելու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. ապրիլի 8
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

08 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 103

ԿԱՄՈ ԱՐՄԵՆԱԿԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2019 թվականի ապրիլի 5-ի կարիքի գնահատման թիվ 13 արձանագրությունը և Ակունք համայնքի Ակունք գյուղի բնակիչ Կամո Արմենակի Շահումյանի դիմումը, որոշում եմ՝

1. Ակունք համայնքի բնակիչ Կամո Արմենակի Շահումյանին տրամադրել ֆինանսական օգնություն 60000 /վաթսուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19թ.
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 104

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 76-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր,գործադիր մարմիններ պետական կառավարում>> ծրագրի II եռամսյակի 4222 հոդվածից 1 000 000 դրամ տեղափոխել II եռամսյակի 4112 հոդված:
2. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր,գործադիր մարմիններ պետական կառավարում>> ծրագրի 4232 հոդվածից 200 000 դրամ տեղափոխել 01 բաժնի 03 խմբի 3 դասի <<Հողի հարկի և գույքահարկի սպասարկում>> ծրագրի 4232 հոդվածից:
3. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր,գործադիր մարմիններ պետական կառավարում>> ծրագրի 4251 հոդվածից 120 000 դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր,գործադիր մարմիններ պետական կառավարում>> ծրագրի 4232 հոդվածից 4261 հոդված:
4. Համայնքի բյուջեի 08 բաժնի 04 խմբի 2 դասի <<Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմ.>> ծրագրի 4819 հոդվածից 1 000 000 դրամ տեղափոխել 08 բաժնի 02 խմբի 4 դասի <<Այլ մշակութային միջոցառումներ>> ծրագրի 4239 հոդված:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019թ. [illegible]
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 105

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387Ն որոշման կարգի 50րդ կետի և հիմք ընդունելով Գարիկ Գենադիկի Պետրոսյանի դիմումը, որոշում եմ՝

1. Գարիկ Գենադիկի Պետրոսյանին պատկանող 07-049-0025-0003 ծածկագրով հողամասի բաժանման արդյունքում առաջացած S1=0.0500հա հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Ակունք համայնք գյուղ Նոր գյուղ 1-ին տեղամաս 3-րդ փողոց թիվ 12, իսկ S2=0.0500հա հողամասին տրամադրել՝ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գյուղ Նոր գյուղ 1-ին տեղամաս 3-րդ փողոց թիվ 12/1 հասցե:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019 թ.
ապրիլի 08

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 106

## ՊՈՂՈՍ ՀՈՎԱԿԻՄԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պողոս Հովակիմի Մանուկյանի դիմումը և ղեկավարվելով ,, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին,, 2002 թվականի դեկտեմբերի 26-ի օրենքի 7 հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրան հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հատկացվածից ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային օգտագործման համար, այն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցուցակում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ՝ որոշում եմ.

1. Ճանաչել Պողոս Հովակիմի Մանուկյանի՝ ծնվ. 28.07.1969թ, սեփականության բստ քարտեզագրման արդյունքների՝ 07-009-050-0013 կադաստրային ծածկագրի, տնամերձ հողամասի նկատմամբ,որը փաստացի նրա կողմից օգտագործվել է նաև մինչև 2001թվականի մայիսի 15-ը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. ապրիլի 10

գ. Ակունք